ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/71, 19.04.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ

Պատվիրատու՝ «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1

Գնման առարկան՝ լուսանկարների և փաստաթղթերի թվայնացման և համակարգի ներդրման ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժել «Բեստկոդ» ՍՊԸ-ի հայտը, չեղարկել «Բեստկոդ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ
Ջանիկ Սևոյան

8 Գայի
գ.Շահումյան, Հայաստան
+ 374 94 80 00 59
ՀՎՀՀ 37488172

ՀՀ ֆինանսների նախարարություն
Բողոքներ քննող անձին
ՀՀ, ք. Երևան, Մելիք-Ադամյան 1
secretariat@minfin.am

«Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան»,
Ջանիկ Սևոյան, ՀՀ, գ.Շահումյան, Գայի 8
sevoyanjanik@gmail.com, 374 94 80 00 59

«Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ,
ՀՀ, ք.Երևան, Արգիշտիի 1/1

«ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1»,
լուսանկարների և փաստաթղթերի թվայնացման
և համակարգի ներդրման ծառայություններ

ԲՈՂՈՔ

Հարգելի բողոքներ քննող անձ

2022 թվականի ապրիլի 14-ին, հրապարակվել է «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի, «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով մրցույթի թիվ 4 Արձանագրությունը (տես Արձանագրություն 4) և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը: **Համաձայն «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի սահմանվել է անգործության ժամկետ 5 օրացուցային օր:**

1. **08.04.2022թ., ժամը 15:00-ին**, տեղի է ունեցել «ԵՔՊԹ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով մրցույթի հայտերի բացումը,
2. Մրցույթին մասնակցել են երկու կազմակերպություն՝ **«Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան»-ը և «Բեստկոդ» ՍՊԸ-ն**:
3. **08.04.2022թ., ժամը 15:00-ին** «Բեստկոդ» ՍՊԸ-ն գնային առաջարկը ներկայացրել է, որպես ԱԱՀ վճարող:
4. Հայտերի բացման պահին, 08.04.2022թ., ժամը 15:00-ին, «Բեստկոդ» ՍՊԸ-ն, Պետական եկամուտների կոմիտեի կայքում հաշվառված է եղել, որպես **«ժամանակավոր դադարեցված» կազմակերպություն**, այսպիսով՝ **չլինելով**

8 Գայի
գ.Ծաղկունյաց, Հայաստան
+ 374 94 80 00 59
ՀՎՀՀ 37488172

որևէ «հարկատեսակի գծով»՝ պարտավորություն ունեցող կազմակերպություն, հետևաբար չի հանդիսացել ԱԱՀ վճարող: Փաստն արձանագրվել նույն օրը՝ ՊԵԿ-ի պաշտոնական կայքում «Բեստկոդ» ՍՊԸ-ի առկա տվյալներով,

5. Փաստերը 08.04.22թ.-ին և 11.04.22թ.-ին գրավոր ներկայացվել է հանձնաժողովին (***տես գրություն 1 և գրություն 2***):

6. Ապրիլի 12-ի (***տես Արձանագրություն 3***) նիստում, հանձնաժողովը հիմք ընդունելով մեր կողմից ներկայացված փաստերը, «Բեստկոդ» ՍՊԸ-ից պահանջել է փաստաթղթեր ԱԱՀ համարվելու վերաբերյալ, ապա ապրիլի 14-ի արձանագրության (***տես Արձանագրություն 4***) հրապարակմամբ, ի գիտություն ընդունել, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերը, ապա նույն արձանագրությամբ, որոշում ընդունել անգործության ժամկետի լրանալուց հետո Պայմանագիր կնքել «Բեստկոդ» ՍՊԸ-ի հետ:

7. **15.04.2022թ.-ին, ժամը 13:39-ին,** գրությամբ (***տես Գրություն 4***), «Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան»-ը հանձնաժողովին խնդրել է տրամադրել «Բեստկոդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, ինչը տրամադրվել է **18.04.2022թ.-ին, ժամը 21:33**:

8. Համաձայն հանձնաժողովի կողմից տրամադրված փաստաթղթերի (***տես Փաստաթղթեր 1-ը***), **«Բեստկոդ» ՍՊԸ-ն** «ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ» հայտարարություն ներկայացրել է **11.04.2022-ին, ժամը 12:19:24-ին,** ինչը փաստում է, որ **«Բեստկոդ» ՍՊԸ-ն** հայտերի ներկայացման պահին, **08.04.2022-ին, ժամը 15:00-ին չի հանդիսացել ԱԱՀ վճարող:**

8 Գայի
գ.Ծախումյան, Հայաստան
+ 374 94 80 00 59
ՀՎՀՀ 37488172

1.ՀՎՀՀ *09218057*

2.Անվանումը *«ԲԵՍՏԿՈԴ»*

3.Հաշվետվության տեսակը *Հայտարարություն՝ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ*

4.Հաշվետու ժամանակաշրջանը *2022 թ.*

5.Հաշվետվության ներկայացման օրը և ժամը *11.04.2022 12.19.24*

6.Հաշվետվության էլեկտրոնային համարը *23nb1104220026404398*

7.Հարկային մարմնում փաստաթղթի գրանցման համար(ՓԳՀ) *E23nb110422000292*

9. Համաձայն նույն փաստաթղթերի «Ավելացված արժեքի հարկի վճարող համարվելու և որպես ավելացված արժեքի հարկի վճարող հաշվառվելու վերաբերյալ» Հայտարարության 1-ին կետով հստակ նշված է, որ **«Բեստկոդ» ՍՊԸ-ն** համարվում է ԱԱՀ վճարող **11.04.2022թ.-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ**, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ **«Բեստկոդ» ՍՊԸ-ն 08.04.2022թ.-ի ժամը 15:00-ն, չի հանդիսացել ԱԱՀ վճարող**:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ԵՎ ՈՐՊԵՍ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՈՂ ՀԱՇՎԱՌՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ԲԵՍՏԿՈԴ»
(հարկ վճարողի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ կամ հասարակ գործ. ընկերության անունը, ազգանունը)

0	9	2	1	8	0	5	7

(ՀՎՀՀ)

1. 11.04.2022թ. -ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ
Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 2-րդ մասի 3-րդ կետի, 2.1-ին մասի 3-րդ կետի և 3-րդ մասի հիմքերով համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող և կիրառելու է ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար:
(1-ին կետը լրացվում է միայն այն դեպքում, եթե առկա չեն 2-րդ կետում նշված հիմքերը, իսկ 2-րդ կետը լրացվելու դեպքում 1-ին կետը չի լրացվում)

10. Համաձայն նույն փաստաթղթերի **«Բեստկոդ» ՍՊԸ-ն** ՊԵԿ-ին ուղղված դիմումով, հստակ նշել է, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ն իր գործունեությունը վերսկսել է

11.04.2022թ.-ից և ուղարկել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Վերջինս փաստում է, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ն 08.04.2022թ.-ի ժամը 15:00-ն, չի ունեցել «գործող» կարգավիճակ և չի հանդիսացել ԱԱՀ վճարող:



ԴԻՄՈՒՄ

Հարգելի տիկին՝ Ա.Միրզոյան.

11.04.2022թ վերսկսել ենք գործունեությունը և ուղարկել ենք ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հարկման ռեժիմի հայտարարություն: Հարկ վճարողների փնտրման համակարգում ԱԱՀ վճարողի հաշվառման համարը չի երևում:

11. Համաձայն ՊԵԿ պատասխան նամակի, հստակ նշված է, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ն «գործող» կարգավիճակ է ստացել 11.04.2022 թվականից և 2022 թ. ապրիլի 11-ից մինչ 2022 թ. դեկտեմբերի 31-ն ընդգրկված է ԱԱՀ վճարողներից ցանկում: Վերջինս փաստում է, որ «Բեստկոդ» ՍՊԸ-ն 08.04.2022թ.-ի ժամը 15:00-ն, չի ունեցել «գործող» կարգավիճակ և չի հանդիսացել ԱԱՀ վճարող:



Հարգելի տիկին Մելքումյան

Ի պատասխան Ձեր 12.04.2022 թվականի գրության հայտնում եմ, որ ըստ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգում առկա տվյալների՝ «ԲԵՍՏԿՈԴ» ՍՊ ընկերության կողմից 11.04.2022թ-ին ներկայացված հարկ վճարողի գործունեությունունը դադարեցնելու և վերսկսելու մասին հայտարարության համաձայն «ԲԵՍՏԿՈԴ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 09218057) ունի «գործող» կարգավիճակ 11.04.2022 թվականից: Կազմակերպությունը 2022թ. ապրիլի 11-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընդգրկված է ԱԱՀ վճարողների ցանկում:

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԹԻՎ 18 ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐՄԻՆԵ ՄԻՐԶՈՅԱՆ

Կատարող՝ ՀՎԱԿ սպասարկման թիվ 18 բաժին
Գլխ. հ/տ Նունե Բաղդասարյան Հեռ. +(374)60849772